SUSTAINABLE LAND MANAGEMENT PRACTICE IN ARMENIA

«Հողի առողջության վերականգնման և հողի այլընտրանքային օգտագործման ցուցադրում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

վերջնական

Կազմակերպության անվանումը	**«ԲԼԵՋԱՆ»**բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության **հասարակական կազմակերպություն**
Հաշվետվության ժամանակահատված	**01.04-30.11.2022**
Պատասխանատու անձ	**Լիաննա Ասոյան** Նախագահ/Ծրագրի ղեկավար
Ներկայացման ամսաթիվ	29.12.2022թ.

1. ԱՄՓՈՓՈՒՄ

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «ԲԼԵՋԱՆ» ՀԿ) 2022թ. ապրիլի 1-ից, որպես տեղական գործընկեր կազմակերպություն իրականացնում է «Հողի առողջության վերականգնման և հողի այլընտրանքային օգտագործման ցուցադրում» ծրագիրն(այսուհետ՝ Ծրագիր), որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) կողմից: Ծրագրի տեղական աջակցող գործընկերներն են «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ն:

Ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզի **4 համայնքներում՝ Արեգունի /Վարդենիս համայնք/, Վարդենիկ /Մարտունի համայնք/, Սարուխան և Հայրավանք /Գավառ համայնք/** (այսուհետ՝ թիրախային համայնքներ), նպատակ ունենալով կատարելագործել (բարելավել) հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման և այլընտրանքային օգտագործման ձևերը՝ բարելավելով հողի առողջությունը:

Ծրագիրը մեկնարկվել և իրականացվում է հետևյալ փուլերով.

— **Ծրագրային տարածքների և շահառուների ընտրություն**

Շահառուների ընտրության ժամանակ կազմակերպվել է հանդիպումներ մարզպետարանի համապատասխան մասնագիտական վարչությունների և բաժինների ղեկավարների և մասնագետների, մարզի տարբեր տարածաշրջանների համայնքների ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է ծրագրի իրականացման հիմնական նպատակները և իրականացման ձևաչափը: Հանդիպումների մասնակիցներին նաև ներկայացվել է նախատեսվող շահառուների ընտրության վերաբերյալ: Շահառուների ընտրության գործընթացի կազմակերպման ընթացքում հիմք է ընդունվել հետևյալ չափանիշները՝

- Շահառուները պետք է ունենան համապատասխան հողատարածք, համայնքին մոտ գտնվող մշակովի հողատարածքներում
- Ներկայացված հողատարածքները /հնարավորության դեպքում/ պետք է ունենան ոռոգելու հնարավորություն
- Շահառուները պատրաստակամ պետք է լինեն կատարել ներդրում /համաֆինանսավորում, աշխատուժ, գյուղ.սարքավորում/, ծրագրային որոշ գործողությունները իրականացնելու համար
- Շահառուները պատրաստակամ պետք է լինեն ներկայացնելու ծրագիրը այլ հետաքրքրված համագյուղացիներին և ֆերմերներին:

Ծրագրի շահառուների ընտրությունը կազմակերպվել է Գեղարքունիքի մարզի հետևյալ տարածաշրջաններում Սևան, Վարդենիս, Գավառ, Մարտունի: Կատարվել է այցելություններ հետաքրքրություն արտահայտած գյուղացիական տնտեսություններ, որպեսզի ուսումնասիրվի իրենց ներկայացված տեղեկությունները և հողատարածքները: Այցելության ընթացքում մանրակրկիտ ներկայացվել է ծրագրի իրականացման նպատակները և ներկայացված

չափանիշները։

Ծրագրի իրականացման սկզբում այցելություններ են իրականացվել ընդհանուր 8 տնտեսություններ նշված տարածաշրջաններում։ Այդ այցելությունների արդյունքում որոշվել է ծրագիրը իրականացնել հետևյալ տնտեսություններում՝

1. Ռուբեն Պողոսյան – Վարդենիս համայնք, գյուղ Արեգունի, 1հա հողատարածք



2. Մարինե Խաչատրյան – Մարտունի համայնք, գյուղ Վարդենիկ, 1հա հողատարածք



3. Վիգեն Գևորգյան - Գավառ համայնք, գյուղ Սարուխան, 1հա հողատարածք



4. Սևան Բաղեյան – Գավառ համայնք, գյուղ Հայրավանք, 1հա հողատարածք



Բոլոր ընտրված շահառուները ունեն համայնքամերձ հողատարածք, որոնք ոռոգելի տարածքներում են: Ընտրված շահառուները պատրաստակամություն են հայտնել կատարել իրենց ներդրումը ծրագրի իրականացման համար:

— **Ցուցադրական դաշտի մշակություն**

Ծրագրի իրականացման համար բյուջեով նախատեսված է եղել իրկանացնել ծրագիրը յուրաքանչյուր ընտրված տնտեսությունում 0,5 հա-ի համար: Ծրագրի շահառուները իրենց կողմից ներդրում են կատարել և ավելացրել են ևս 0,5 հա տարածք: Արդյունքում յուրաքանչյուր շահառուի մոտ ծրագիրը իրականացվել է 1 հա հողատարածքի վրա:

Շահառուներն իրենց հողատարածքներում իրականացրել են համապատասխան հողամշակման գործողություններ, նախապատրաստելով այն բազմատեսակ խոտախառնուրդի ցանքի համար։

Ծրագրի իրականացման համար ընտրված հողատարածքներում խոտախառնուրդի ցանքը սկսվել է 2022թվականի մայիսի երկրորդ կեսին և ավարտվել է 2022թվականի հունիսի սկզբին։

1. Ռուբեն Պողոսյան – Վարդենիս համայնք, գյուղ Արեգունի





2.Մարինե Խաչատրյան – Մարտունի համայնք, գյուղ Վարդենիկ





3. Վիգեն Գևորգյան - Գավառ համայնք, գյուղ Սարուխան





4. Սևան Բադեյան – Գավառ համայնք, գյուղ Հայրավանք





Ծրագրի իրականացման համար ընտրվել էր 2 տեսակի բազմատեսակ խոտախառնուրդներ Նիդերլանդների և Լեհաստանի արտադրություն:

Նիդերլանդական խոտախառնուրդ

Անվանում	Թաց խոտի կերային արժեք	Չոր խոտի կերային արժեք
Festuca rubra(BARUSTIC) 20% - Շյուղախոտ կարմիր - Овсяница красная	0.21	0.54
Trifolium repens (ALICE) 15% - Երեքնուկ սողացող - Трифолиум ползучий	0.21	0.54
Festuca arundinacea (BARELITE) 20% - Շյուղախոտ - Овсяница высокая	0.21	0.54
Lolium perenne (BARKAMAZ) 25% - Որոմ բազմամյա - Райграс многолетний	0.18	0.41
Dactilis glomerata (DASCADA) 20% - Ոզնախոտ կծկավոր - Ежа сборная	0.23	0.55

Լեհական խոտախառնուրդ

Անվանում	Թաց խոտի կերային արժեք	Չոր խոտի կերային արժեք
Zycica trwała(MAJA) 20% - Որոմ բազմամյա - Райграс многолетний	0.20	0.48
Życica wielokwiatowa (TRUTETRA) 15% - Որոմ բազմածաղիկ-Плевел многоцветковый	0.20	0.51
Kostrzewa czerwona (REDA) 20% - Շյուղախոտ կարմիր - Овсяница красная	0.31	0.51
Życica wielokwiatowa westerwoldzka (KOGA) 35% - Որոմ բազմածաղիկ - Райграс многоцветковый	0.2	0.57

Նշված խոտախառնուրդները Հայաստանի բնական կերհանդակներում աճող էնդեմիկ բուսատեսակներից են, և համարվում են բարձրարժեք կերային բույսեր, բոլոր բույսերը բազմամյա են: Երեք փորձադաշտում /Արեգունի, Հայրավանք և Սարուխան/ նաև կատարվել է բազմամյա աշորայի ցանք՝ որպես աշնանային ենթացանք:

— Ցանքատարածքների բույսերի սնուցման համար Արեգունի, Հայրավանք և Սարուխան ցանքատարածքներում կատարվել է բույսերի հավելյալ սնուցում: Բույսերին տրվել է տերևային սնուցման Կարբոն Պլյուս պարարտանյութ /Ակտիվ Ագրի Սայնս, Կանադա/: Պարարտացման հիմնական նպատակն էր բույսերին սնուցել որպեսզի արմատային համակարգի ձևավորման և աճի ընթացքում հավելյալ սնուցում լինի: Տրված պարարտանյութը օգնելու է նաև բույսերին ավելի հեշտ դիմակայել 2022 թվականի աճի սեզոնի ընթացքում երաշտային եղանակային պայմանները:

— **Էլեկտրական ցանկապատ**

Հայրավանք և Վարդենիկ գյուղերում գտնվող ցուցադրկան դաշտերում տեղադրվել է էլեկտրական ցանկապատ: Էլեկտրական ցանկապատի կիրառումը շատ նպատակահարմար է ցուցադրական դաշտը գյուղատնտեսական կենդանիներից պաշտպանելու համար: Էլեկտրական ցանկապատի կիրառման այլ դրական կողմը այն է, որ դաշտը կարող է կիսվել մի քանի մասերի և այդ փոքր հատվածներում կարող է կազմակերպվել գյուղ. կենդանիների հերթափոխ արածեցում /այլ կերպ ասած զագոնային-փարախային արածեցում/: Այս կերպ հնարավոր է լինում արդյունավետ կառավարել կերային ռեսուրսը և կենդանիներին ապահովել կանաչ խոտով, ինչպես նաև արածեցումը սկսել արոտային սեզոնից շուտ և ավարտել խոր աշնանը:

Ծրագրի շրաջանակներում օգտագործվել է այնպիսի էլեկտրական ցանկապատի սարք, որը հնարավորություն ունի աշխատելու ինչպես 12Վոլտ մարտկոցից այնպես էլ 220 Վոլտ էլեկտրական լարմամբ ցանցից: Հաշվի առնելուվ այն հանգամանաքը որ որոշ ցանքատարածքներ գտնվում են բնակավայրերից հեռու և 220Վոլտ էլեկտրական լարում ապահովելը շատ դժվար կլինի, ծրագիրը կառուցել է արևային մարտկոցով աշխատող համակարգ, որի շնորհիվ լիցքավորվում է 12Վոլտ ապահովող մարտկոցը:





Ցանկապատի կառուցման համար օգտագործվել է երկաթյա և բազալտե մանրաթելից հենասյուներ: Նշված սյուների վրա տեղադրվել է պլաստմասե մեկուսիչներ, որոնց միջով անցկացվել է ցանկապատի էլեկտրահաղորդիչ լար: Էլեկտրահաղորդիչ մետաղական լարը համակցված է գունավոր պոլիէթիլենային պինդ պարանի հետ: Գյուղատնտեսական կենդանիները մոտենալով էլեկտրական ցանկապատին ստանում են էլեկտրական շանթահարում, որից հետո իրենց մոտ ձևավորվում է պայմանական ռեֆլեքս, ինչպես նաև նրանք ճանաչում և հիշում են այդ ցանկապատի լարի գույնը, ու այլևս հնարավորինս հեռու են մնում ցանկապատից:





Ծրագրային միջոցների խնայողության շնորհիվ, ստանալով ծրագրի պատասխանատուների թույլտվությունը, հանարավոր է եղել գնել և տեղադրել ևս մեկ էլեկտրական ցանկապատ սարք Արեգունի գյուղում գտնվող ցուցադրական դաշտում:

Ցանկապատված տարածքում կենդանիների արածեցման ընթացքում ջրով ապահովելու համար ծրագրով գնվել է պլաստիկ մեծ տարաներ և պլաստիկ խողովակներ, որպեսզի կառուցվի ժամանակավոր ջրախմոցային կետ, որը արածեցման սեզոնի ընթացքում հնարավոր կլինի տեղափոխել դաշտի տարբեր կետերում տեղադրելու համար:

- **Շահառուների ընդգրկվածություն**

Ծրագրում ընդգրկված շահառուների անմիջական ընդգրկվածությունը, բոլոր գործողությունների իրականացման ընթացքում եղել է ամենաբարձր մակարդակի վրա: Շահառուները ընդգրկել են նաև իրենց համագյուղացիներին որոնք հետաքրքրություն են հայտնել ծանոթանալ ծրագրի նպատակներին և տեսնել ու սովորել ծրագրի ընթացքում իրականացվող գործողությունները:

Շահառուների ընտանիքների երիտասարդ անդամների ընդգրկվածությունը նույնպես բարձր ոգևորություն է ապահովել ծրագրային թիմի համար: Բոլոր գործողությունների ընթացքում նրանք եղել են թիմի կողքին, նաև մասնակցել են ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացներին:

Հայրավանք գյուղում գտնվող փորձադաշտի ցանկապատում









Վարդենիկ գյուղում գտնվող փորձադաշտի ցանկապատում









- **Ուսուցումների կազմակերպում**

Ծրագրի իրականացման ընթացքում շատ կարևոր է տարածել ծրագրային գաղափարը և նպատակները այլ ֆերմերների շրջանում և ուսուցանել վերջիններիս: Այս եղանակով հնարավոր է լինում ապահովել ծրագրային գործողությունների շարունակականությունը և հնարավոր կրկնօրինակումը, որպեսզի այն իրականացվի նաև այլ գյուղերում կամ հետաքրքրված տնտեսություններում:

Այս նպատակով ծրագրի իրականացման թիմը կազմակերպել է 4 դասընթաց Մարտունի, Վարդենիս, Գավառ և Սևան համայնքների բնակիչների համար: Դասընթացների ընդհանուր մասնակիցների թիվը եղել է 40: Մասնակիցների մեծ մասը ֆերմերներ են և խոշոր մենատնտեսներ, որոնք հետաքրքրված են եղել իրականացվող ծրագրի գաղափարով:

Դասընթացների ընթացքում ծրագրի փորձագետների կողմից ներկայացվել և ուսուցանվել է հետևյալ թեմաները՝

1. Հողի առողջության բարելավման 5 սկզբունքները

2. Ծածկող մշակաբույսերի կիրառման կարևորությունը և ձևերը

3.Արածեցման կազմակերպման հերթաարոտային եղանակի տեխնոլոգիան և առավելությունները

4. Հողամշակության նոր ագրոտեխնոլոգիաներ և նոր մշակաբույսեր
















Ուսուցումների ընթացքում ներկայացված թեմաները շատ ողջունվել են մասնակիցների կողմից: Մասնակիցները շատ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ուսուցման ընթացքում ներկայացնելով տարբեր հարցեր շնորհանդեսների մեջ ընդգրկված տեղեկության վերաբերյալ: Դասընթացների ավարտին բոլոր մասնակից ֆերմերները ստացել են

մասնակցության վկայականներ: Մասնակից ֆերմերները ցուցադրական դաշտեր այցելելու հետաքրքրվածություն են արտահայտել, որպեսզի տեղում կարողանան ծանոթանալ հողի առողջության բարելավման ներկայացված սկզբունքներին: Մասնակիցներից շատերը խնդրել են, որպեսզի հնարավորություն դեպքում ապագայում նմանատիպ դասընթացներ իրականացվի նաև իրենց համայնքներում:

- **Փոխադարձ այցելություններ փորձի փոխանակման նպատակով**

Ծրագրի իրականացաման ընթացքում ծրագրի չորս շահառուները կատարել են փոխադարձ այցելություններ միմյանց ծրագրային տարածքներ՝ յուրաքանչյուր շահառու այցելել է մյուս երեք տարածքներ: Այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են հողի առողջացմանն ուղղված գործողությունների ընթացքը, բույսերի աճի տեմպը, վերլուծվել են ցանքատարածքների նմանությունները և տարբերությունները՝ դրանք համադրելով տվյալ տարածաշրջանի կլիմայականան պայմանների հետ: Փոխադարձ այցելությունները շատ օգտակար են եղել և նպաստել են շահառուների միմյանց միջև փորձի փոխանակմանը:

- **Ցանքատարածքների մոնիտորինգ**

Ծրագրի ողջ ընթացքում պարբերաբար իրականացվել են մոնիտորինգային այցեր ընտրված հողտարածքներ: Այցերը կատարվել են հետևյալ պարբերականությամբ՝ սերմնացանից 25 օր անց, յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ: Խորհրդատվական այցեր են տեղի ունեցել բոլոր ֆերմերային տնտեսություններ, նպատակը՝ ֆերմերներին աջակցել, որպեսզի իրենց տնտեսություններում հնարավոր լինի լավ արդյունքներ ապահովել ու նպաստել ծրագրի շարունակականությանը: Այցերի ընթացքում ուսումնասիրվել են բույսերի աճի տենդենցը, համեմատականներ են անցկացվել մյուս տնտեսությունների հետ և համապատասխան ցուցումներ տվել շահառուներին: Մոնիտորինգային և խորհրդատվական խմբում ընդգրկված են եղել ծրագրի ղեկավարը, փորձագետը և տվյալ ցանքատարածքի պատասխանատուն: Այցերի ընթացքում գրանցվել է, որ բոլոր 4 շահառուները իրենց հողատարածքներում բույսերի խնամքն իրականացրել են ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան, որը և տվել է ցանկալի արդյունք: Մոնիտորինգային խումբը յուրաքանչյուր այցելությունից հետո քննարկել է ցանքատարածքների ընթացիկ իրավիճակը: Ընտրված հողատարածքներ այցելություններ են եղել նաև GIZ-ի աշխատակիցների կողմից:





